ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

դեկտեմբերի 2023 թվականի №-Ա

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-8 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ներդրումային ծրագրի արժեքը կազմում է 1 833,8 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հետևյալ հիմնական ուղղություններով.
   1) «Սևան» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 16,7 մլն դրամ.
   2) «Հրազդան» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 215,0 մլն դրամ.
   3) «Արգել» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 255,4 մլն դրամ.
   4) «Արզնի» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 528,6 մլն դրամ.

5) «Քանաքեռ» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 488,9 մլն դրամ.

6) «Երևան-1» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 9,1 մլն դրամ.

7) «Երևան-3» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 232,2 մլն դրամ.

8) Բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով իրականացվելիք ներդրումներ՝ 87,9 մլն դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
դեկտեմբերի 2023թ.